ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՏԱՐԱԾՎԱԾ ՎԱՂ ԱՐԱԲԱԿԱՆ ԴՐԱՄՆԵՐ

Խ. Ա. ՄՈՒՇԵՂՅԱՆ

Սասանյանների իշխանության կործանումից և արաբական տիրապետության հաստատումից հետո դրամային շրջանառությունը Հայաստանում թևակոխեց իր զարգացման նոր փուլը, որը բնորոշվում է անցյալում եղած սասանյան և վաղ բյուզանդական դրամների սպառմամբ ու արաբատառ դրամների տարածմամբ։ Զրադաշտական ու քրիստոնեական պատկերագրությամբ դրամները, որոնք մինչև VII դ. կեսը այնքան հայտնի էին Հայաստանում, իրենց տեղը զիջեցին մուսուլմանական դրամներին։ Դրանք Հնդկաստանից մինչև Իսպանիա աշխարհագրական հսկայական տարածքի վրա հաստատված արաբական խալիֆաթի դրամներն էին։ Սակայն շրջանառության ընթացքում անցումը սասանյան ու վաղ բյուզանդական դրամներից արաբականին կատարվեց աստիճանաբար։ Խալիֆաթի ստեղծման սկզբնական շրջանում արաբական իշխանությունները չվերացրին նվաճված երկրներում եղած դրամա-կշռային սիստեմները, այլ առևտրի պահանջները բավարարելու համար օգտվեցին դրանցից։ Զնայած Սասանյանների գերիշխանությունը պաշտոնապես վերացել էր, բայց անցյալում թողարկած նրանց դրամները շրջանառությունից չէին հանվել։ Բացի այդ, VII դ. երկրորդ կեսին սասանյան և բյուզանդական դրամների ընդօրինակությամբ թողարկվեցին արաբական դրամներ, որոնք հայտնի են, այսպես կոչված, արաբա-սասանյան և արաբա-բյուզանդական դրամներ անուններով։ Օմայան փոխարքաները հիմք ընդունելով վերջին Սասանյաններից Հազկերտ III-ի (632—651), Հորմիզդ IV-ի (579—590) և առավելապես Խոսրով II Փարվեզի (590—628) դրախմաների պատկերագրությունը, թողարկում էին դրանց նմանությամբ արաբատառ դրամներ։

Պահպանված նմուշները ցույց են տալիս, որ նման դրամներ թողարկվել են պատկերագրության տարբեր տվյալներով։ Դրանց վաղ օրինակները կրում են անցյալից հայտնի սասանյան թագավորների պատկերադրոշմը, զրադաշտության նշաններով և պահլավերեն, ինչպես նաև արաբերեն الله الحمد կամ بسم الله գրություններով։ Արծաթե դրամների վրա, պահլավերենից բացի, հաճախ արաբերենով հիշատակվում էին տարեթվերը և փողերանոցների տեղանունները։ Տեղ-տեղ շրջանառության մեջ էին մտել դրամներ, որոնց վրա արձանագրված էր մուսուլմանական հավատի արաբական բանաձևը՝ لا اله الا الله محمد رسول الله (Չկա Աստվածություն Ալլահից բացի, Մուհամմեդը Ալլահի առաքյալն է)։ Առանձին շրջանների դրամների վրա սասանյան ատրուշանի փոխարեն պատկերված էր խալիֆը (ողջ հասակով կանգնած) և նրա կողքին՝ امير المومنين (տերը ուղղահավատների) արաբատառ արձանագրությունը։ Դրանց զուգընթաց պահլավերեն արձանագրություններով

դրամներ թողարկվում էին խալիֆներ Մուավիայի և Աբդ-ալ-Մելիքի անվամբ։ Պահլավերեն արձանագրություններով դրամներ մեծ մասամբ թողարկում էին Իրանի Օմայան կուսակալները։

Արաբա-սասանյան դրամների զանազանությունները թե՛ պատկերների և թե՛ գրությունների ձևավորման առումով շատ են։ Դրանք շրջանառության մեջ երկար մնացին Խորասանում, Բուխարայում և հատկապես Տաբարիստանում։ Հայկական շուկաներում արաբա-սասանյան դրամները լայն տարածում չեն ունեցել և Հայաստանի դրամային տնտեսության համար բնորոշ չեն եղել։ Սասանյան դրամների ընդօրինակություններով թողարկված արաբական դրամները ծագել են բուն Իրանի կենտրոնական ու արևելյան նահանգներում՝ Խորասանի, Ջեբալի, Խուզիստանի, Ֆարսի, Կերմանի, Սեջստանի վաճառաշահ քաղաքներում[1]։

Ինչ վերաբերում է արաբա-բյուզանդական դրամներին, ապա դրանք ևս հանդես են եկել պատկերների ու գրությունների տարբեր ձևավորումներով։ Սկզբում թողարկում էին Հուստինոս II-ի և Սոֆիայի (565—578) պատկերներով (անցյալում տարածված) պղնձյա դրամներ, որոնց վրա արաբերենով նշված էր փողերանոցի տեղանունը։ Այնուհետև թողարկվեցին Հերակլես կայսեր, ինչպես նաև նրա գահաժառանգների պատկերներով ու լատինատառ արձանագրություններով դրամներ, որոնց վրա բացի փողերանոցի անվան արաբերեն արձանագրությունից դրոշմվում էին նաև بسم الله (Հանուն Ալլահի) խոսքերը։ Նմանօրինակ դրամներ մեծ մասամբ թողարկվում էին Դամասկոսում, Բաալբեկում և Հիմսում։ Հետագայում շրջանառության մեջ մտան խալիֆի պատկերով դրամներ, որոնք իրենց տեսակով եզակի էին իսլամի պատմության մեջ։ Դրանց մի երեսին պատկերված էր խալիֆը՝ ձեռքը դաշույնին, շուրջը محمد رسول الله արձանագրությունը, իսկ մյուս երեսին՝ հունարեն M կամ m տառը և երկրի կամ քաղաքի անունը արաբերենով։

Խալիֆի պատկերով թողարկվում էին նաև արաբա-բյուզանդական դրամներ, որոնց կենտրոնում էր հունարեն Φ տառը, իսկ շուրջը՝ մուսուլմանական հավատի արաբատառ բանաձևը։ Կային նաև նմանօրինակ պղնձյա դրամներ՝ խալիֆի տիտղոսը ներկայացնող خليفة الله امير المومنين (Ալլահի փոխարինորդը, տերը ուղղահավատների) գրությամբ[2]։ Մինչև VII դ. վերջը անընդհատ ընդարձակվում էին դրամների վրայի արաբատառ արձանագրությունները։ Խալիֆի տիտղոսից բացի հիշատակվում էին նաև նրա անձնանունը և մուսուլմանական աղոթքի խոսքերը։ Արաբա-բյուզանդական դրամները հիմնականում թողարկվում էին Միջերկրականի Սիրիա-Պաղեստինյան ծովեզերքի վաճառաշահ քաղաքներում[3]։ Ավելի ուշ տարածվեցին Հերակլես և Հերակլես-Կոնստան-

---

[1] John Walker, M. A., A Catalogue of the Arab-Sassanian coins (Umaiyad governors in the East, Arab-Ephalites, Abbassid governors in Tabaristan and Bukhara), London, 1941. British Museum (այսուհետև՝ WAS), p. 3—168.

[2] John Walker, M. A., D. Litt., A Catalogue of the Arab-Buzantine and post-reform Umaiyad coins, London, 1956. British Museum (այսուհետև՝ WAB), p. 30. pl. VII).

[3] WAB, p. 32.

տին կայսրերի պղնձյա դրամների ընդօրինակությամբ թողարկված արաբական դրամներ[4], որոնց վրա արձանագրվում էր. بسم الله عبد الملك || مما امر به || امير المومنين որ նշանակում է՝ հանուն Ալլահի ուղղահավատների տիրոջ Աբդ-ալ-Մելիքի հրամանով է կատարված դրամի դրվագումը։

Պղնձյա դրամներից բացի թողարկվում էին նաև ոսկյա դրամներ։ Ի տարբերություն խալիֆի նշանով բյուզանդական ոսկյա դրամների, արաբական իշխանությունները դրոշմում էին միայն մի ուղղահայաց գիծ։ Այդօրինակ ոսկյա դրամների վրա թողարկման վայրերը չէին հիշատակվում։ Պահպանված վաղագույն նմուշների վրա ընթերցվում է. بسم الله ضرب هذا الدينار سنة ست و سبعين (Հանուն Ալլահի դրվագված է այս դինարը յոթանասուն վեց թվին)[5]։ Արաբա-բյուզանդական դրամներ դրոշմվել են հին բյուզանդական պատկերների և ժամանակի արաբական արձանագրությունների տարբեր ձևավորումներով[6]։ Սակայն ինչպես արաբա-սասանյան, այնպես էլ արաբա-բյուզանդական դրամները Հայաստանի արևելյան շրջաններում և Կովկասում տարածված չեն եղել։ Հավանական է, որ դրանք առանձին դեպքերում թափանցել են Սիրիային ու Բյուզանդիային մերձավոր հայկական շուկաները։ Միանգամայն որոշակի է այն իրողությունը, որ մինչև VIII դ. սկիզբը խալիֆաթի տիրապետության տակ գտնվող երկրներում զուտ արաբական դրամներ չեն թողարկվել։ Տարբեր կշռային չափերով թողարկված արաբա-սասանյան ու արաբա-բյուզանդական դրամները չէին կարող նպաստել պետական հարկերի գանձմանը, դրամա-հաշվային գործարքների հստակ կատարմանը և ապրանքափոխանակության պահանջներին, քանի որ դրանք շրջանառության մեջ ընդունվում էին կշեռքով։ Խալիֆաթի զինված ուժերի հաղթական նվաճումները, իսլամի տարածումը, առևտրի ու արհեստների զարգացման ընթացքը հրամայաբար պահանջում էին վերացնել դրամա-կշռային համակարգերի տեղական առանձնահատկությունները, թողարկվող դրամների պատկերագրության խայտաբղետությունը և ստեղծել միասնական դրամային սիստեմ։

Դա կատարվեց խալիֆ Աբդ-ալ-Մելիքի հատուկ ռեֆորմով, հիջրայի 77 (=696/97) թ.։ Սահմանվեց որոշակի կշռային չափերով և նոր ձևավորմամբ զուտ արաբական դրամների թողարկման կարգ։ Խալիֆաթն ստեղծեց իր դրամա-կշռային սիստեմը, որը շուրջ երեք հարյուր տարի իշխեց միջազգային ապրանքա-դրամական հարաբերությունների վրա։ Որոշվեց դրամներ թողարկել ոսկուց, արծաթից և պղնձից։ Ոսկե դրամի համար որպես կշռային չափ սահմանվեց 4,25 գ. մաքուր ոսկին և անվանվեց دينار (դինար)՝ հին հռոմեական (լատիներեն) denarius բառից[7]։ Հայերն այն շարունակում էին կոչել դահեկան՝ իբրև ոսկե դրամի ավանդական անուն։ Արծաթե դրամի համար սահմանվեց 2,97 գ. մաքուր արծաթը և կոչվեց درهم (դիրհեմ), որը հունական

---

[4] WAB, p. 43, pl. IX.
[5] WAB, p. 42, pl. VIII.
[6] WAB, p. 1—83, pl. I—X.
[7] Schrötters, s. 140.

դրաχմա (դրախմա) բառի արաբական արտահայտությունն է[8]։ Պղնձյա դրամները կայուն կշռային չափեր չունեին և թողարկվում էին 3—5 գ. քաշով։ Ի տարբերություն նախկին դրամների, արաբական խալիֆաթի դրամները թողարկվում էին առանց պատկերների, բացառապես արաբատառ արձանագրություններով՝ քաղված մահմեդական «սուրբ գրքի» ասույթներից։ Ամենակարևոր դարձվածքները դրոշմվում էին դրամի երեսների կենտրոնական մասերում և շուրջը արվում էին առավել ընդարձակ՝ ինչպես կրոնական, այնպես էլ ժամանակագրական ու տեղագրական արձանագրություններ։ Ոսկուց թողարկում էին մեկ, կես և մեկ երրորդական դինարի քաշ ունեցող միավորներ։ Վաղ արաբական ոսկյա դրամները ունենում էին հետևյալ արձանագրությունները.

Ա երես (կենտրոնում)	Թարգմանություն
لا اله الا	Չկա Աստվածություն բացի
الله وحده	Ալլահից միակ
لا شريك له	Չկա ընկեր նրան

Շուրջը՝

محمد رسول الله ارسله بالهدى و دين الحق ليظهره على الدين كله	Մուհամմեդը առաքյալն է Ալլահի, որը ուղարկել է նրան առաջնորդությամբ և ճշմարիտ հավատով, որպեսզի վերջինիս հաղթող դարձնի բոլոր այլ հավատների վրա

Բ երես (կենտրոնում)	Թարգմանություն
الله احد لله الصمد لم يلد و لم يولد	Ալլահը միակն է, Ալլահը հավիտենական է, անծնունդ է և անծնող

Շուրջը՝

بسم الله ضرب هذا الدينار في سبع و سبعين	Հանուն Ալլահի դրվագված է այս ոսկե դրամը յոթանասուն յոթ թվականին

Իսլամի գաղափարները տարածող նման ոսկյա դրամներ թողարկվում էին Դամասկոսում և քաղաքի անունը դինարների վրա չէր հիշատակվում։ Տեղանունների գրությամբ ոսկե դրամներ երբեմն թողարկվում էին նաև Եգիպտոսում (بافريقية) և Իսպանիայում (بالاندلس), ուր դինարների մի երեսին դրոշմում էին հավատի բանաձևի առաջին մասը, իսկ մյուս երեսին՝ հետևյալը՝ بسم الله || الرحمن || الرحيم։ Մնացած արձանագրությունները մնում էին նույնությամբ։ Սակայն թե՛ տեղանուններով և թե՛ առանց տեղանունների

8 Նույն տեղում, էջ 145։

ոսկյա վաղ արաբական դրամներ Հայաստանում և հարևան երկրներում չեն եղել։ Դրանք տարածվել են խալիֆաթի կենտրոնական նահանգներում (Սիրիա—Իրաք, Եգիպտոս) և իսլամական շրջաններում։ Հայաստանում և հարևան երկրներում մասսայական տարածում են ունեցել արծաթյա դրամները, որոնք Աբդ-ալ-Մելիքի դրամային ռեֆորմից հետո թողարկվում էին ոչ միայն արաբական տիրապետության կենտրոնական մասերում, այլև Հայաստանում ու Օմայաններին ենթակա մյուս երկրներում։ Միջին Ասիայից մինչև Իսպանիա ձգվող աշխարհագրական տարածքի վրա ավելի քան 67 քաղաքների փողերանոցների թողարկած արծաթյա դրամները առևտրի շնորհիվ մտնում էին միջազգային շրջանառության մեջ։

Հայկական լեռնաշխարհի կենտրոնական և հյուսիս-արևելյան շրջանները, խալիֆաթի վարչական բաժանմամբ, միավորված էին մեկ նահանգի մեջ, որն անվանվում էր Արմինիա (ارمينية)։ Աշխարհագրական առումով Վանա լճից հարավ, Եփրատի ակունքներից մինչև Դերբենդ ձգվող տարածությունը, որի կենտրոնական մասը ընդգրկված էր Արաքս և Կուր գետերի միջև, կապող օղակ էր Կովկասի վրայով դեպի Եվրոպա ընթացող քարավանային առևտրի համար։ Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայաստանում օմայան դրամներ թողարկվել են արաբականների հետ միաժամանակ։ Հայաստանում կտրված ամենավաղ օմայան արծաթ դրամը վերաբերում է հիջրայի 81 թ. (մ. թ. 700—701), որի վրա արձանագրված է.

Արմինիա, դիրհեմ, 81 թիվ.

Ա երես (կենտրոնում, շրջագծի մեջ, երեք տողով)	Բ երես (կենտրոնում, շրջագծի մեջ, չորս տողով)
لا اله الا	الله احد الله
الله وحده	الصمد لم يلد و
لا شريك له	لم يولد ولم يكن
	له كفوا احد
Շուրջը	Շուրջը
بسم الله ضرب هذا الدرهم	محمد رسول الله ارسله بالهدى
بارمينية سنة احدى و ثمنين	و دين الحق ليظهره على الدين كله
	ولو كره المشركون

Արձանագրությունները քաղված են Ղուրանի IX գլխի XXXIII կամ LXI գլխի IX ոտանավորներից։ Դրամների կենտրոնական մասերը ամփոփված են կետավոր, երիզափակ զույգ շրջանակներով, որոնց միջև, հավասար հեռավորության վրա, պատկերված են հինգ փոքրիկ օղակներ։

Նույնանման արծաթ դրամներ թողարկվում էին խալիֆաթի տարբեր նահանգներում[9]։ Իսլամի գաղափարների տարածման գործում օմայանների

---

9 Հայաստանում թողարկված հիշյալ դրամը կշռում է 2,48 գ., տրամագիծը 26 մմ, մաշված է, եզրից մեկ տեղ ծակված, պահվում է Բեռլինի թանգարանում։ H. Nutzel, Königliche Museen zu Berlin, Katalog der Orientalischen Münzen (այսուհետև՝ Nut.)-I, Berlin, 1898, s. 67, № 304, taf. IV.

դրամների վրա դրոշմած ամենաէական յոզունդը Ղուրանի CXII գլխից քաղված ասույթն էր. الله احد الله الصمد لم يلد و لم يولد و لم يكن له كفوا احد. كفوا احد (Ալլահը միակն է, Ալլահը հավիտենական է, նա անծնունդ է, անծնող և չկա նրան հավասար ոչ ոք)։ Այս խոսքերը գրվում էին արաբական տիրակալության մեջ, այդ թվում և Հայաստանում թողարկվող բոլոր դրամների վրա։

Հարկ է նկատել նաև, որ Օմայան հարստության արծաթյա դրամները թողարկվում էին առանց խալիֆի կամ որևէ պաշտոնական անձի անունը նշելու։ Սակայն, որպես կանոն, միշտ արձանագրվում էր, թե որտեղ և երբ է դրվագված տվյալ դրամը։ Եթե ի մի բերենք այդ ժամանակներում Արմինիայում, ինչպես ողջ երկրամասի, այնպես էլ նրա մեջ մտնող առանձին քաղաքների անուններով թողարկված դրամների նմուշները, ապա դրանց դրվագման տարեգրությունը կարելի է ներկայացնել հետևյալ աղյուսակով.

Դրամի մետաղը և անվանումը	Դրամի վրա նշված տարեթիվը և նրա համապատասխան թ. թ.	Դրամի վրա նշված երկրի կամ քաղաքի անունը (բնագիրը և թարգմանությունը)	Մատենագրական տվյալներ
1	2	3	4
Արծաթ Դիրհեմ	81 (700—701)	ارمينية (Հայաստան)	Nüt. I, 67, № 304, taf. IV.
»	92 (710/11)	»	T[10]. № 2725.
»	94 (712/13)	»	T. № 401; M[11]. 4, № 104.
»	95 (713/14)	»	T. № 424; L[12], 75, № 239; Nüt. 1, № 347; W[13]. № 60; AZ[14], № 49, Э[15], № 71.

[10] В. Тизенгаузен, Монеты Восточного Халифата, С.-Петербург, 1873.

[11] А. Марков. Инвентарный каталог мусульманских монет императорского Эрмитажа, С.-Петербург, 1896.

[12] H. Lavoix, Catalogue des Monnaies musulmanes de la Bibliotheque Nationale, I, Paris, 1877.

[13] A. Weyl, Verzeichnis der reichhaltigen Sammlung orientalischer Münzen des Fürsten G., Berlin, 1885.

[14] Ahmed Ziya, Catalogue of Islamic coins, Constantinople, 1910.

[15] Рукописный каталог восточных монет отдела нумизматики государственного ордена Ленина Эрмитажа (Ленинград).

1	2	3	4
Արծաթ Դիրհեմ	96 (714/15)	ارمينية (Հայաստան)	T. № 439; L. № 240; W. № 62; Nūt. 1, № 348; M. 5, №№ 135, 136, 137.
»	97 (715/16)	»	T. № 450; L. № 240; W. № 64; M. 6, № 140.
»	98 (716/17)	»	T. № 461; W. № 66; GE[16], № 117; M. 6, №№ 150, 151.
»	99 (717/18)	»	T. № 472; L. № 242; W. № 68; M. 7, № 162; Nūt. I, № 445.
»	100 (718/19)	»	T. № 480; W. № 69; BM, I, № 48; M. 7, №№ 169, 170.
»	101 (719/20)	»	T. № 491; W. № 71; Nūt, I, № 470; M. 7, №№ 178—181.
»	102 (720/21)	»	T. № 499; W. № 72; Nūt. I, № 482; M. 8, №№ 185—186.
»	103 (721/22)	»	T. № 507; L. № 246; W. № 75; Nūt. I, № 483.
»	104 (722/23)	»	T. № 513; L. № 430; W. № 76; Э. № 89/191.
»	105 (723/24)	»	T. № 521; M. 8, № 202.
»	106 (724/25)	»	T. № 526.
»	107 (725/26)	»	T. № 532; Nūt. I, № 509.
»	108 (726/27)	»	T. № 526; ПМА. I, № 50.
»	109 (727/28)	»	T. № 543; ПМА, I, 50; L. № 466.
Պղինձ Ֆելս	առանց տարեթվի	»	BM. I, 180; № 39; Nūt. I, № 1939; M. 62, № 1168; Муш. №№ 12—16.
»	123 (740/1)	»	ПМА, I, 53.

[16] Ghalib Edhem, Catalogue des Monnales de Khalifes (Musee Imperial Otto man) Constantinople, 1894.

1	2	3	4
Արծաթ Դիրհեմ	84 (703)	دبيل (Դվին)	Nūt. I, 68; № 312; taf. IV; WAB, 139, № B. 28.
»	85 (704)	»	Э. № 132; WAB, 139.
»	85 (704)	تفليس (Թիֆլիս)	T. № 310; WAB, 129.
»	86 (705)	دبيل (Դվին)	T. № 314; M. 2, № 33; WAB, 139, № 337.
»	87 (705/06)	»	WAB, 139.
Պղինձ Ֆելս	առանց տարեթվի	»	M. 62, №№ 1169, 1170.
Արծաթ Դիրհեմ	89 (707/08)	ارّان (Աղվանք)	AZ, 5, № 27; WAB, 107.
»	90 (708/09)	»	M. 3, № 60; WAB, 107.
»	94 (712/13)	جنزه (Գանձակ)	WAB. 135; ПМА, I, 46.
»	111 (729/30)	مدينة بلخ البيضا Քաղաք Բալխ ալ-Բայդա (Ճերմակ Բալխ Դաղստանում)	T. № 558; Nūt. I, № 514; tafel IV; WAB, 128; ПМА, 50—51.
»	114 (732/33)	الباب (Դերբենդ)	WAB, 122.
»	115 (733/34)	»	WAB, 123; T. № 576.
»	118 (736/37)	»	WAB, 123, № 295, pl. XV; L. № 476; ПМА, I, 51.
»	119 (737)	»	T. № 595; WAB, 123.
»	120 (737/38)	»	T. № 604; Nūt. I, № 513; L. № 477; WAB, 123, № 296, pl. XV.
»	121 (738/39)	»	M. 10, № 256; WAB, 123. № 17, ПМА, I, 52.

1	2	3	4
Պղինձ Ֆելս	121 (738/39)	الباب (Դերբենդ)	ПМА, I, 52—53.
Արծաթ Դիրհեմ	123 (740/41)	»	T. № 616; WAB, 124, № 298, pl. XV.
»	124 (741/42)	»	T. № 619; WAB, 124.
»	125 (742/43)	»	L. № 478; WAB, 124.
»	126 (743/44)	»	T. № 628; WAB, 124.
»	128 (745/46)	»	T. № 638; L. № 541; WAB, 124, № P. 67.
»	131 (748/49)	»	WAB, 124, № Ties. 8.

Փաստերը ցույց են տալիս, որ Հայաստանում և մերձավոր անդրկովկասյան շրջաններում Օմայանները դրամներ են թողարկել մոտ 50 տարի (հիջրայի 81 թ. մինչև 131 թ.=մ. թ. 700 (701—748/49 թ.)։ Հետևաբար, խալիֆաթի հետռեֆորմյան դրամների թողարկումը Հայաստանում սկսվել է VIII դ. սկզբից, որը և վկայում է Անդրկովկասում Օմայանների վերջնական հաստատման մասին։ Սակայն մինչև VIII դ. քսանական թվականների վերջը թողարկված դրամների վրա դրվագման վայրը հիշատակվել է Արմինիա ارمينية ընդհանուր հասկացությամբ և յուրաքանչյուր դրամի վրա, որպես կանոն, բառացի արձանագրվել է.

بسم الله ضرب هذا الدرهم بارمينية سنة.....

VIII դ. 30-ական թվականներից օմայան դրամներ դրվագվել են առավելապես Դերբենդում, ուր արձանագրվել է.

بسم الله ضرب هذا الدرهم بالباب سنة.....

Դերբենդից բացի, դրամներ են թողարկվել նաև Դվինում, Աղվանքում, Գանձակում, Թիֆլիսում և Բալխ ալ-Բայդայում։ Նկատենք, որ արաբների նվաճած երկրներում դրամների վրա հաճախ նշվում էր ոչ թե փողերանոցի (քաղաքի) անունը, այլ այն նահանգի, որի գլխավոր քաղաքում հատում էին դրամը։ Այդ սովորությունը գալիս էր հին ժամանակներից։ Սասանյանների օրոք Խուզիստանի Շոշ (Սուզա) քաղաքում թողարկված դրախմաների վրա պահլավերենով նշվում էր ողջ երկրի համար բնորոշ (AIRAN) անունը[17]։ Խորասանի քաղաքներում՝ Հերաթում, Բալխում, Աբրշահում, Մերվում թողարկվող սասանյան դրախմաների վրա հիշատակվում էր երկրամասի՝ Խորասանի (HURASAN) անունը[18]։ Քերման նահանգի գլխավոր քաղաքը հենց այդ անունով էլ կոչվում էր։ Խալիֆաթը չփոխեց ավանդական այդ ձևը, և Զերենջ քաղաքում թո-

[17] WAS, p. CII—CV.
[18] WAS, p. CIII, CXIX.

զարկված դիրհեմների վրա հաճախ գրվում էր՝ դրվագված է Սեջստանում[19]։ Արգաբիլում կտրված դրամների վրա գրվում էր՝ դրվագված է Ադրբեջանում[20], Պարտավ քաղաքի դրամների վրա՝ Առանում (بارآن, Աղվանքում[21]) և այլն։ Հայտնի է, որ V—VII դդ. Հայաստանի արհեստագործության ու առևտրի ամենախոշոր կենտրոնը Դվինն էր։ Ամենայն հավանականությամբ, վաղ արաբական բոլոր այն դրամները, որոնց վրա արաբատառ արձանագրված է. بسم الله ضرب هذا الدرهم بارمينية (Հանուն Ալլահի դրվագված է այս դիրհեմը Հայաստանում) թողարկվել են Դվինում։ Կան նաև ուղղակի Դվինի անունով դրամներ[22]։

Այդ նույն սկզբունքով էլ Առանում (بارآن) թողարկված դրամները դրվագվում էին նրա կենտրոնում՝ Բարդայում بردعه (հայկական աղբյուրներում Պարտավ)[23]։ Բացառված չէ, որ Առանի անվամբ դրամներ առանձին դեպքերում կարող էին կտրվել նաև Գանձակում, ինչպես ենթադրում են Գեորգ Մայլսը և Ջոն Ուոկերը[24]։ Սակայն պարզ է, որ քաղաքը տվյալ նահանգի սահմաններից դուրս լինել չէր կարող, ուստի կանխահաս է երախտաշատ դրամագետ Ե. Ա. Պախոմովի այն կարծիքը, որ Արմինիայի դրամները թողարկված կարող էին լինել առավելապես Պարտավում (بردعه)[25]։

Դրամների թողարկման հիմնական պահանջը կապված է եղել տվյալ վայրի տնտեսության, առկա ապրանքափոխանակության հետ։ Հետևաբար, այս հարցում ընդունել միայն քաղաքական պայմաններ, որ Պարտավում էր Աբասյանների օրոք ապրում Արմինիայի էմիրը, ճիշտ չէ։ Որքան էլ խալիֆաթի մեջ վարչականորեն սերտ էին Հայաստանի, Առանի ու Արևելյան Վրաստանի քաղաքական կապերը, այդուհանդերձ, դրանք ունեին ապրանքային արտադրության իրենց ներքին առանձնահատկությունները։ Իրենց տիրապետության շուրջ երկու հարյուր տարիների ընթացքում ինչպես Օմայանները, այնպես էլ Աբասյանները գիտեին մեկ նահանգի մեջ միավորված առանձին երկրամասերի աշխարհագրական ու ազգագրական հատկանիշները։ Հետևաբար, Օմայանների և ապա Աբասյանների օրոք թողարկված արաբատառ մակագրությամբ դրամները ծագել են Արմինիայում (بارمينية), վերաբերում են բուն Հայաստանին և դուրս են եկել առավելապես Դվինի փողերանոցից։ Այդ նույն սկզբունքով էլ խալիֆաթի բոլոր այն դրամները, որոնց վրա հիշատակված է Արմինիայի մեջ մտնող Առանի անունը بارآن, վերաբերում են Կուր գետից դեպի հյուսիս-արևելք ընկած շրջաններին և ամենայն հավանականությամբ թողարկվել են տնտեսական խոշոր կենտրոն Պարտավ քաղաքում, որի անունը արաբական աղբյուրներում նշվում է بردعه ձևով։

---

19 В. Тизенгаузен, стр. XXVI, № 56, 58.

20 Նույն տեղում, էջ XXIII, № 3; WAB, p. 106.

21 Նույն տեղում, էջ XXIII, № 4, XXIV, № 24.

22 Նույն տեղում, էջ XXIII, № 8, XXVI, № 44; WAB, p. 109.

23 Նույն տեղում, էջ XXIV, № 24.

24 WAB, p. 107, 135.

25 Е. А. Пахомов, Монеты Азербайджана (ПМА), вып. I, Баку, 1959, стр. 57.

Հետագայում, եթե Արմինիայի անունով դրամներ են թողարկվել, ինչպես, օրինակ, Պարտավում (بردعة)[26] կամ Հարունաբադում (هرونآباد)[27], ապա հատուկ նշվել է այդ մասին, ցույց տալու համար այն տարբերությունը, որ կա տվյալ արտակարգ օրինակների և ընդհանուր թողարկվող արմինիական դրամների միջև։ Այս կարծիքին են նաև Ք. Մ. Ֆռեհնը[28], Վ. Գ. Տիզենհաուզենը[29], Ռ. Ռ. Ֆասմերը[30], Ե. Ֆ. Ցամբաուրը[31], Ա. Ա. Բիկովը[32] և ուրիշներ[33]։

Հետաքրքրական են նաև պղնձյա դրամների միջոցով բացահայտվող տվյալները։ Այս դրամները թողարկվում էին տեղական մանր ապրանքափոխանակության համար։ Հիրավի, ներքին շուկայի զարգացման մասին կարելի է դատել ոչ միայն ոսկյա ու արծաթյա դրամներով, որոնք բնորոշ են միջազգային հարաբերություններին, այլ առավելապես պղնձյա դրամներով։ Վերջիններս վկայում են, թե որքանով էր նշանակալից դրամի դերը, երբ մանր առևտուրն անգամ կատարվում էր դրամով, մի իրողություն, որ շատ թույլ էր արտահայտվում նախաարաբական ժամանակներում։ Օմայանների խալիֆաթում թողարկված պղնձյա դրամները բաժանվում են երեք հիմնական տեսակների.

ա) Կրոնական արձանագրություններով դրամներ, առանց տեղանունների և տարեթվերի։

բ) Կրոնական արձանագրություններից բացի տեղանունների հիշատակությամբ, տարեթվերով, ինչպես նաև առանց տեղանունների դրամներ։

գ) Դրամներ, որոնք իսլամի լոզունգներից, տեղանուններից ու տարեթվերից բացի կրում են տեղական պաշտոնյաների անուններով արձանագրություններ։

Դվինի հնագիտական պեղումներից հայտնաբերվել են արաբատառ պղնձյա դրամներ, որոնք պարունակում են վաղ արաբական ժամանակներին վերաբերող կարևոր վկայություններ։ Պարզվում է, որ Դվինում օմայան պղնձյա դրամները մեծ մասամբ թողարկվել են ողջ Արմինիայի անունով։ Այդ պղնձյա դրամների բացակայությունը բուն Հայաստանից դուրս և դրանց առատությունը Դվինում մի անգամ ևս հաստատում է, որ խալիֆաթի Արմինիա (ارمينية) նահանգի անունով դրամների թողարկման գլխավոր կենտրոնը իրոք եղել է Դվինը։ Հայտնի է, որ պղինձը սովորաբար տեղական շուկայի սահմաններից

---

26 Тизенгаузен, № 2043, 2097.

27 Նույն տեղում, № 1051, 1076։

28 Ch. M. Fraehnii, Recensio Numorum Muhammedanorum, Petropol, 1826, p. 21; Quinque centuriale Numorum Anecdotorum Chalifarum cum Umeijadarum tum Abbasidarum, 1837, p. 283—284.

29 Тизенгаузен, стр. XXIII.

30 Р. Р. Фасмер, Монеты Саджидов, Известия общества обследования и изучения Азербайджана, 1927, № 5, стр. 37.

31 E. V. Zambaur, Contributions a la Numismatique orientale, I, Numismatische Zeitschrift, vol. 36, Vienne, 1905, s. 25

32 А. А. Быков, Дайсам ибн Ибрахим ал-Курди и его монеты («Эпиграфика Востока», 1955, вып. X, стр. 14—15).

33 Խ. Մուշեղյան, Դվինի մի քանի դրամների մասին, ՀՍՍՀ ԳԱ պատմության թանգարան «Աշխատությունների ժողովածու», հ. V, Երևան, 1959, էջ 113—131։ Г. И. Джапаридзе, Из истории арабской нумизматики и метрологии IX—X вв., автореферат диссертации, Тбилиси, 1968, стр. 7—9.

դուրս չէր անցնում։ Հետևաբար, զարմանալի չէ, որ Դվինի օմայան ֆելսերը ի հայտ են գալիս հենց Դվինի ավերակներում։ Ազնիվ մետաղներին (ոսկի, արծաթ) առևտուրը դուրս էր բերում միջազգային ասպարեզ, իսկ պղինձը մնում էր տեղում։ Ուստի պատահական չէ, որ Դվինում կտրված օմայան արծաթյա դրամները գտնվել են Հայաստանից շատ հեռու, Եվրոպայի արևելյան և հյուսիսային երկրներում[34]։

Արմինիայի անունով Դվինում կտրված VIII դ. առաջին կեսին բնորոշ պղնձյա արաբատառ դրամների վրա արձանագրված են.

Արմինիա, ֆելս (առանց տարեթվի)

Ա երես (կենտրոնում)	Բ երես (կենտրոնում)
الله	محمد
احد الله	رسول
الصمد	الله
Շուրջը՝	Շուրջը՝
لااله الا الله وحده	بسم الله ضرب هذا الفلس
لا شريك له	بارمينية وجاز

Այսպիսի պղնձյա դրամներ 2—3 գ. քաշով և 20—23 մմ տրամագծով հաճախ են ի հայտ գալիս Դվինի կենտրոնական թաղամասում[35]։

Նույն ժամանակաշրջանում թողարկվել են նաև Դվինի արաբական անունով պղնձյա օմայան դրամները, որոնց վրա, աննշան տարբերությամբ, կրկնվել են նշված արձանագրությունները։ Նկատի ունենալով օմայան ֆելսերի նշանակությունը Հայաստանի դրամային տնտեսության համար VIII դ. առաջին տասնամյակներին, անհրաժեշտ ենք համարում տալ նրանց նկարագիրը.

Դեբիլ, ֆելս (առանց տարեթվի)

Ա երես (կենտրոնում)	Բ երես (կենտրոնում)
الله	محمد
احد الله	رسول
الصمد	الله
Շուրջը՝	Շուրջը՝
لا اله الا الله وحده	بسم الله ضرب هذا لفلس (sic)
لا شريك له	بدبيل جاز

Դվինում կտրված անտարեթիվ և անանուն դրամներից երկու օրինակ պահվում է Լենինգրադի Պետական Էրմիտաժում[36], իսկ մի քանիսը հրապա-

---

34 Х. А. Мушегян, Денежное обращение Двина по нумизматическим данным, Ереван, 1962, стр. 154—166 (Муш.).

35 Նույն տեղում, էջ 61, № 12—16։

36 Նույն տեղում, էջ 62, № 1169, 1170։

բակել ենք Դվինի դրամագիտական նյութի քննության առնչությամբ[37]։ Վերջերս մեկ ուրիշ օրինակ հրատարակվեց Բրիտանական թանգարանի օմայան դրամների շարքում[38]։ Թե՛ չափագրական և թե՛ հնագիտական տվյալներով Դվինի պղնձյա դրամները հար և նման են Արմինիայի ֆելսերին, որով ևս հաստատվում է նրանց նույն փողերանոցում դրվագված լինելու իրողությունը։

Տարեթվի հիշատակությամբ Հայաստանում թողարկված օմայան պղնձյա դրամը վերաբերում է հիջրայի 123 թ. (մ. թ. 740/41)։ Այն ունի հետևյալ արձանագրությունները.

Արմինիա. ֆելս. 123 թիվ.

Ա երես (կենտրոնում, երեք տողով)

لا اله الا

الله وحده

لا شريك له

Մուսուլմանական հավատի արաբական բանաձևի առաջին մասը ներկայացնող այս եռատող արձանագրությունը վերցված է երկու երիզափակ շրջագծերի մեջ, որոնց միջև չորս առանձին տեղերում նշված են մեկական փոքրիկ օղակներ.

Բ երես (կենտրոնում, շրջագծի մեջ, երեք տողով)

محمد

رسول

الله

Շուրջը՝

بسم الله ضرب هذا الفلس بارمينية

سنة ثلث و عشرين و مئة

Այս ամենը կետավոր երիզափակ զույգ շրջագծերի մեջ, որոնց միջև հինգ տեղով նշված են մեկական փոքրիկ օղակներ։

Այս պղնձյա դրամը (կշիռը՝ 2,58 գ., տրամագիծը՝ 23—25 մմ) հրատարակել է Ե. Ա. Պախոմովը[39]։

Արմինիայի մերձկասպյան շրջաններում, մասնավորապես Դերբենդում գտնված տարեթվի հիշատակությամբ օմայան պղնձյա դրամները վերաբերում են հիջրայի 121 թ. (մ. թ. 738/39), որոնք թողարկվել են հետևյալ արձանագրություններով.

ալ-Բաբ, ֆելս, 121 թիվ.

Ա երես (կենտրոնում, զույգ շրջագծերի մեջ, երեք տողով)

لا اله الا

الله وحده لا

شريك له

Բ երես (կենտրոնում, կետավոր շրջագծերի մեջ, երեք տողով)

محمد

رسول

الله

---

37 Խ. Մուշեղյան, Դվինի մի քանի դրամների մասին, ՀՍՍՀ ԳԱ պատմության թանգարան, «Աշխատությունների ժողովածու» հ. 5, էջ 118։

38 WAB, թ. 247։

39 Пахомов, стр. 53.

Այս գրության վերևից և ներքևից դիավում են ջնջված նշաններ։ Ներքին և արտաքին շրջագծերի մեջ չորս տեղերով կան մեկական փոքրիկ օղակներ։ Երիզափակ շրջանակը տրված է ռոմբաձև կետերով։

Շուրջը՝

ضرب هذا الفلس بالباب

سنة احدى و عشرين و مئة

Այս ամենը վերցված է ռոմբաձև կետերից բաղկացած երիզափակ շրջանակի մեջ։

Այս օրինակը ևս (կշիռը 2,47 գ.) պահվում է Ե. Ա. Պախոմովի օմայան դրամների հավաքածուում[40]։ Ի տարբերություն Դվինում կտրված դրամների, Դերբենդի պղնձյա դրամները հազվագյուտ են։ Բացառված չէ, որ առաջիկա հնագիտական պեղումները հին Բարդայում (Պարտավ), Դերբենդում, Թիֆլիսում, Գանձակում և ընդհանրապես Արմինիայի հյուսիսային մասերում կարող են ի հայտ բերել հիշյալ ֆելսերից նոր օրինակներ, որոնք կարևոր են ժամանակագրության համար։ Հայաստանում Օմայանների տիրապետության վերջին պղնձյա դրամը թողարկվել է էմիր Իսահակ իբն Մուսլիմի անունով և ունի հետևյալ արձանագրությունները.

Արմինիա. ֆելս, Իսահակ իբն Մուսլիմ.

Ա երես (կետավոր շրջանակի մեջ, երեք տողով)

لا اله

الا الله

و حده

Շուրջը՝

بسم الله مما امر الامير اسحق بن مسلم

Բ երես (կետավոր շրջանակի մեջ, երեք տողով)

محمد

رسول

الله

Շրջագծից դուրս, շրջանավոր՝

بسم الله ضرب هذا الفلس بارمينية

Վերոհիշյալ արձանագրությունները դրոշմված են արաբատառ քուֆի գրելաձևով և վերցված են կետավոր, երիզափակ շրջագծերի մեջ։

Այս ֆելսերից առանձին օրինակներ պահվում են Բրիտանական[41], Բեռլինի նախկին թագավորական թանգարաններում[42] և հայտնի են այլ հրատարակություններից[43]։

Դվինի ավերակներում հայտնաբերված մաշված դրամների շարքում, ամենայն հավանականությամբ, կարող են լինել Մուսլիմի որդի Իսահակի անունով թողարկված ֆելսեր ևս[44]։ Չափագրական առումով դրանց միջին քաշը մոտ 3 գ. է, 19—20 մմ տրամագիծ ունեցող հատաձուլերով։ Գրավոր աղբյուրների

---

40 Նույն տեղում, էջ 52—53։

41 St. Lane Poole, Catalogue of Oriental Coins in the British Museum (BM) I, London, 1875, p. 219, № 151.

42 Nüt., I, № 1940.

43 Тизенгаузен, № 2758; Пахомов, стр. 54—55; WAB. p. 229, № 748, pl. XXV.

44 Мутегян, № 18, 19:

վկայությամբ, VIII դ. երկրորդ քառորդի վերջին Օմայանները անկում էին ապրում։ Օմայան վերջին խալիֆ Մրվանի հրամանով այդ ժամանակ Հայաստանում կուսակալ (էմիր) էր կարգվել Մուսլիմի որդի Իսահակը, որի անվամբ պղնձյա դրամները հաստատում են գրավոր աղբյուրների տեղեկությունները։ Չնայած այդ ֆելսերը դրվագվել են առանց տարեթվի, սակայն հայտնի է, որ էմիր Իսահակ իբն Մուսլիմը Հայաստանում պաշտպանում էր Օմայանների շահերն այն ժամանակ, երբ Սիրիայում և Իրաքում իշխանությունը անցել էր Աբասյանների ձեռքը։ Հայաստանից Իսահակ իբն Մուսլիմը զորքերով գնացել է Միջագետք և Հիմս (Եմեսա) քաղաքի մոտ կռվի բռնվել աբասյան երկու զորաջոկատների հետ, չկարողանալով հաղթել նրանց, փակվել է Սումայսաա քաղաքում և յոթ ամիս դիմադրելուց հետո սպանվել։ Այդ դեպքերը տեղի են ունեցել հիջրայի 132 թ. (մ. թ. 749—750)[45]։ Հետևաբար, դրամը պետք է թողարկված լինի մինչ այդ, հիջրայի 126—130 թթ. (մ. թ. 743—748)[46]։ Սակայն դա կարող էր տեղի ունենալ նաև Իսահակ իբն Մուսլիմի Հայաստանից դեպի Միջագետք մեկնելու օրերին՝ հիջրայի 132 թ. (749/50), ինչպես ենթադրում է Ջոն Ուոկերը[47]։ Հետաքրքրական է, որ, բացառությամբ Բեռլինում պահվող օրինակի[48], մնացած բոլոր նմուշների վրա նահանգի անունը հիշատակված է ոչ թե ارمينية, ինչպես սովորաբար օմայան դիրհեմների ու ֆելսերի արձանագրություններում, այլ ارمنية, որ շատ հազվադեպ է VIII—X դդ. դրամագիտական վկայություններում[49]։ Հավանաբար, կնիքների փորագրիչ-վարպետը տեղացի է եղել, անծանոթ արաբերենի ուղղագրությանը և ارمينية բառի մեջ առաջին يـ (յա) տառը չի նշել։ Տեղական կերտվածքի դրամներից բացի, VIII դ. առաջին կեսում Հայաստանի դրամային շրջանառությունը լիցքավորվել է նաև խալիֆաթի կենտրոնական նահանգներում՝ Իրաքում, Ջազիրայում, Ջեբալում և Ադրբեջանում թողարկված դրամներով։ Այդ են վկայում մի կողմից Դվինի հնագիտական պեղումների շնորհիվ գտնված օմայան դրամները, մյուս կողմից՝ ողջ Անդրկովկասում հայտնաբերված դրամագիտական նյութերը։ Դվինի կենտրոնական թաղամասում ի հայտ են եկել օմայան ֆելսեր, որոնք թողարկվել են Սիրիայի Դամասկոս, Հիմս, Կիննասրին քաղաքներում[50]։

Սիրիայից Հայաստան բերված ֆելսերը կարող են վկայել VIII դ. հայ-սիրիական կապերի մասին։ Տնտեսական և քաղաքական հարաբերությունների անմիջականությունը դրամները փաստում են նաև Հայաստանի և Իրաքի համար։ Իբրև իրեղեն ապացույց այդ է հավաստում Ապարանի Շենավան գյուղում հայտնաբերված VIII դ. 30-ական թվականներին վերաբերող գանձը[51]։ Նրա կազմում եղած բացառապես օմայան դիրհեմները թողարկվել են մեծ մասամբ Տիգրիսի ստորին հոսանքին մոտ գտնվող Վասիտ քաղաքում, որոնց հետ առանձին օրինակներով Հայաստան են թափանցել արծաթյա դիրհեմներ Պարսից ծոցի իրանական քաղաքներից, մասնավորապես Սուք-մին-ալ-Ահվազից

---

45 G. Weil, Geschichte der Chalifen, II, Mannheim, 1848, s. 11.
46 Пахомов, стр. 56.
47 WAB, p. 229—230, № 748.
48 Nut., I, № 1940.
49 Тизенгаузен, № 2578.
50 Հայաստանի պատմության պետական թանգարան, № 10678, 11210, 11995, 12395։
51 Նույն տեղում, № 17430։

և Քերմանից[52]։ Սիրիական ծագում ունեցող օմայան դրամների շրջանառությունը Հայաստանում հայտնի է նաև այլ վկայություններով[53]։

Իրաքում թողարկված դրամների թափանցումը Անդրկովկաս պարզորոշ երևում է Գանձակում գտնված գանձից, որի 44,4 տոկոսը Վասիտ քաղաքում դրվագված օմայան արծաթյա դրամներ են[54]։

Այսուհանդերձ, դրսից բերված օմայան դրամներ Հայաստանում դեռևս սակավաթիվ են, որը հնարավորություն չի ընձեռում դատելու նրանց լայն տարածման մասին։

РАННЕАРАБСКИЕ МОНЕТЫ В АРМЕНИИ

Х. А. МУШЕГЯН

Резюме

Наблюдение над составами монетных кладов показывает, что после падения державы Сасанидов драхмы последних не были изъяты из обращения. Переход от сасанидской денежно-весовой системы к арабской в Армении совершился на рубеже VII—VIII вв. С этого времени денежное обращение страны вступило в новый период своего развития— период распространения куфических монет. По реформе Абд-ал-Мелика на обширной территории Арабского Халифата была установлена единая монетная система. Дореформные, так называемые арабо-сасанидские и арабо-византийские монеты в Армении не чеканились. Таковые на Кавказе чрезвычайно редки.

Выпуск собственно арабских монет в Армении, а также в прилегающих к ней краях Закавказья отмечается с 81 по 131 годы хиджры (700—749 гг. н. э.). Город Двин (Дебиль по монетам) был главным центром в Армении для чеканки арабских монет омайадского типа. Раннеарабские монеты чеканились в городе Дербенде (ал-Баб) и очень редко в Тифлисе, а также в Джанзе. Серебряные монеты обычно выпускались с обозначением места чеканки, наименованием всей области Армении. Кроме монет местного выпуска в города Армении проникали дирхемы из Сирии, Ирака, Фарса и Хузистана.

---

52 Նույն տեղում։

53 Նույն տեղում, № 22419, Мушегян, № 8.

54 Е. А. Пахомов, Ганджинский клад 1929 года и переломный момент арабской торговли в Закавказье, стр. 74.